ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԻՄՊԻՉՄԵՆՏ» ԴԱՇԻՆՔԻ, «ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ», «ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ» ԵՎ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ 2007Թ. ՄԱՅԻՍԻ 12-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՄԱՄՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԹԻՎ 149-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐՈՎ ԳՈՐԾԵՐԸ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՐՑԵՐՈՎ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հաշվի առնելով, որ «Իմպիչմենտ» դաշինքի, «Նոր ժամանակներ», «Օրինաց երկիր» եւ «Հանրապետություն» կուսակցությունների դիմումների հիման վրա՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2007թ. մայիսի 19-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» թիվ 149-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ ՍԴ-ի կողմից քննության ընդունված գործերը վերաբերում են նույն հարցին, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածի դրույթները, նշված գործերը միավորել եւ քննել դատարանի նույն նիստում:

2. Գործի դատաքննությունն սկսել 2007 թվականի հունիսի 1-ին, ժամը 10.00-ին:

3. Գործով զեկուցողներ նշանակել ՀՀ սահմանադրական դատարանի անդամներ Վ. Հովհաննիսյանին եւ Հ. Դանիելյանին:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74 հոդվածի 9-րդ մասի հիման վրա գործի քննությունն անցկացնել բանավոր ընթացակարգով:

5. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74 հոդվածի 4-րդ մասի՝ նշված գործը քննելիս որպես պատասխանող կողմ ներգրավել ընտրությունների արդյունքներն ամփոփող պետական մարմնին՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74 հոդվածի 4-րդ մասի հիմքերով սույն գործով որպես հարակից պատասխանողներ՝ իրենց իրավասությունների հետ կապված հարցերով, ներգրավել ՀՀ դատախազությանը, ՀՀ ոստիկանությանը, ՀՀ արդարադատության նախարարությանը, Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովին:

6. Թողնել առանց բավարարման «Իմպիչմենտ» դաշինքի դիմումում ներկայացված միջնորդությունը՝ որպես դիմումի ապահովման միջոց ՀՀ ԿԸՀ-ի 19.05.2007թ. թիվ 149-Ա որոշման գործողությունը կասեցնելու վերաբերյալ, նկատի ունենալով, որ, նախ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի՝ նման իրավասություն ամրագրող նորմերը վերաբերում են այն ակտերին, որոնց սահմանադրականությունն է վիճարկվում սահմանադրական դատարանում, երկրորդ՝ համապետական ընտրությունների արդյունքներով առաջացած վեճերի հետ կապված դիմումների ապահովման խնդիրը լուծվել է սահմանադրական նորմերի մակարդակով, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 51 եւ 68 հոդվածներում, որոնց համապատասխան օրենքով նախատեսվել են սահմանադրական դատարանում նման գործերի քննության անհամեմատ սեղմ ժամկետներ:

7. Սահմանադրական դատարան ներկայացված միջնորդությունների հիման վրա.

ա) ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից պահանջել ՀՀ փարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալներ՝ 12.05.2007թ. դրությամբ,

բ) ՀՀ ԿԸՀ-ից պահանջել 12.05.2007թ. ՀՀ ԱԺ համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների քվեարկության տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրությունները,

գ) ՀՀ ԿԸՀ-ից պահանջել 12.05.2007թ. ՀՀ ԱԺ ընտրություններում համամասնական ընտրակարգով գրանցված կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամների՝ օրենքով նախատեսված հաշվետվությունները,

դ) ՀՀ ԿԸՀ-ից պահանջել 12.05.2007թ. ՀՀ ԱԺ ընտրությունների հետ կապված կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքների դիմում-բողոքների քննարկման արձանագրությունները, դրանց տրված պատասխանները,

ե) ՀՀ ԿԸՀ-ից պահանջել 12.05.2007թ. ՀՀ ԱԺ ընտրությունները կազմակերպած ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների եւ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների տվյալները՝ անուն, ազգանուն, աշխատանքի վայր եւ ում կողմից է նշանակվել,

զ) ՀՀ կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովից պահանջել 2003-2007թթ. իր իրավասության շրջանակներում հաստատված եւ իրականացված բարեգործական ծրագրերի ցանկը,

է) ՀՀ դատական դեպարտամենտից պահանջել ՀՀ ԱԺ 12.05.2007թ. ընտրությունների վերաբերյալ գործերով ՀՀ դատարանների կողմից ընդունված ակտերի պատճենները:

8. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 40 հոդվածի 2-րդ մասի համաձայն նշված բոլոր պահանջների կատարման համար վերջին ժամկետ սահմանել մինչեւ 2007թ. հունիսի 1-ը:

9. Դիմողների կողմից դիմումներում ներկայացված այլ միջնորդություններին անդրադառնալ գործի դատաքննության ընթացքում՝ կողմերի բացատրությունները լսելուց եւ փաստարկներին ծանոթանալուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

29 մայիսի 2007 թվականի
ՍԴԱՈ -70